

ՏԵՂԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄ

ԱՐԵՆԻ, ԱՂԱՎՆԱԶՈՐ ԵՎ ՌԻՆԴ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ



ՄՐՑԱԿՑԱՅԻՆ
ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ (PACA)

ՎԱՅՈՑ ԶՈՐ, ՄԱՐՏ - ԱՊՐԻԼ, 2013

Համագործակից կառույցներ

Գերմանական միջազգային համագործակցություն (GIZ)



Գեղարքունիքի առևտրաարդյունաբերական պալատ



Հայաստանի Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն



Արենի, Աղավնաձոր եվ Ռինդ համայնքներում տեղական տնտեսական զարգացման գործընթացը սկսվեց 2013 թ-ի մարտ ամսին, Գեղարքունիքի առևտրաարդյունաբերական պալատի ու Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի նախաձեռնությամբ և Գերմանական միջազգային համագործակցության (GIZ) օժանդակությամբ, որի ընթացքում բացահայտվեցին համայնքների տեղական տնտեսության հիմնական մրցակցային առավելությունները և ախտորոշվեցին տնտեսության առաջատար ճյուղերը, որի հիման վրա վեր հանվեցին տնտեսության զարգացման համար արմատական նշանակություն ունեցող նախաձեռնություններ:

Գործընթացն իր մեջ ներառեց հետևյալ փուլերը:

- ⇒ Գործընթացի ընդհանուր ներկայացում, ծանոթություն, խմբի հավաքագրում:
- ⇒ Համայնքների տնտեսական քարտեզագրում- համայնքի առաջատար ճյուղերի առանձնացում, ճյուղերում առաջատար դերակատարների բացահայտում:
- ⇒ Առկա արժեչրթանների վերլուծություն, բարեփոխման նախաձեռնությունների բացահայտում:
- ⇒ Աշխատանքային հանդիպումներ առաջատար ճյուղերի վերլուծության համար:
- ⇒ Արդյունքների ամփոփում, նախաձեռնությունների ստացում:
- ⇒ Դաշտային աշխատանք – հանդիպում համայնքների դերակատարների հետ՝ ստացված արդյունքի, նախաձեռնությունների ստուգման համար:
- ⇒ Նախաձեռնությունների վերջնականացում, գրքույկի մշակում:

Բովանդակություն

Համագործակից կառույցներ.....	2
Համայնքներ.....	4
Համայնքների մրցակցային առավելությունները.....	6
Տնտեսության ճյուղերի վերլուծություն.....	7
Խաղողագործություն և գինեգործություն.....	8
Խաղողագործության – Գինեգործության արժեչղթայի գնահատում և բարելավման նախաձեռնություններ.....	14
Այգեգործություն և պտուղների շարունակական վերամշակում.....	19
Այգեգործության ճյուղի վրա ազդող գործոններ.....	20
Նախաձեռնություններ այգեգործության և պտուղների շարունակական վերամշակման արժեչղթայում.....	21
Բերքի քանակական և որակական աճ.....	21
Պտուղների շարունակական վերամշակում.....	21
Զբոսաշրջությունը Արենի, Աղավնաձոր և Ռինդ համայնքներում.....	23
Զբոսաշրջության արժեչղթայի գնահատում.....	24
Նախաձեռնություններ տուրիզմի զարգացման ոլորտում.....	26
Իրականացվելիք գործողությունները ըստ խնդիրների և պատասխանատուներ.....	26
Անասնապահություն.....	28

Համայնքներ

Արփա գետի հովտում և հարակից սարահարթերում՝ Եղեգնաձոր համայնքից 20 -25 կմ հեռավորության վրա են գտնվում ՀՀ հնագույն բնակավայրերից երեքը՝ Արենի, Աղավնաձոր և Ռինդ համայնքները:

Այս համայնքները, ունենալով վարչական հստակ տարանջատում, այնուամենայնիվ, դարերի ընթացքում թե՛ տնտեսական և թե՛ ազգակցային առումներով սերտաճել են: Ունեն փոխկապակցված տնտեսություններ, ազգակցական և գործնական սերտ կապեր:



Մարդիկ հյուրասեր են, գործունյա: Ավանդական «Ղավուրման», Արփա գետի համեղ ձուկն ու «Արենի» գինին անտարբեր չեն թողնում համայնքներ այցելած ցանկացած հյուրի:

Ձմեռը չափավոր ցուրտ է, ոչ երկարատև, գարունը տաք է՝ երկարատև, խոնավ, ամառը՝ շոգ, չոր ու երկարատև է: Գերակշռում են հաստատուն պարզ եղանակները, աշունը տաք է, օրերը՝ քիչ ամպամած:

Խաղողագործությունը և գինեգործությունը այս համայնքներում ավանդական հիմքերի վրա են: Արենի գյուղի տարածքում՝ «Թռչունների քարանձավ» կոչվող քարանձավում, մի քանի տարի առաջ հայտնաբերվել է գինեգործության 5000 – 5500 տարի վաղեմություն ունեցող արտադրամաս, որն համարվում է աշխարհի ամենահին գինու արտադրամասը:

Այս տարածքում են գտնվում բազմաթիվ հնավայրեր, խաչքարեր, տեսարժան վայրեր, Մոմիկ ճարտարապետի կողմից կառուցված սուրբ Աստվածածին, Նորավանք եկեղեցիները և այլն:

Երեք համայնքներում էլ տնտեսության հիմնական ճյուղը խաղողագործությունն է և գինեգործությունը, ինչպես նաև զարգացող պտղաբուծությունը: Մասնակի զարգացած է անասնապահությունը:

Կա պատմամշակութային, էկոլոգիական, էքստրիմ և գինու տուրիզմի մեծ պոտենցիալ: Յուրաքանչյուր տարի Արենի գյուղում կազմակերպվում է բերքի / գինու տոն, որտեղ ներկայացվում է Արենի համայնքի և հարակից գյուղերի արտադրանքը:

Ստորև ներկայացված են համայնքերի հիմնական ցուցանիշները.

Ցուցանիշներ	Արենի	Ռինդ	Աղավնաձոր
Բնակչություն	2006	1726	2062
• Խաղող	114 հա	90 հա	480 հա
• Դեղձ	45 հա	90 հա	50 հա
• Ծիրան	-	40 հա	20 հա
• Այլ	15 հա	40 հա	3 հա
Վարելահողեր	400 հա	330 հա	466 հա
Խոտհարք	29 հա	50 հա	47 հա
Արոտավայր	1500 հա	1121 հա	1071 հա
Խոշոր եղջերավոր	435 գլուխ	850 գլուխ	1800 գլուխ
• կով	171 գլուխ	340 գլուխ	860 գլուխ
Մանր եղջերավոր	162 գլուխ	271 գլուխ	2600 գլուխ

Համայնքների մրցակցային առավելությունները

Տեղական թիմը և փորձագետները համատեղ վեր հանեցին համայնքների մրցակցային առավելությունները: Հետագա նախաձեռնությունները և տնտեսության զարգացման հեռանկարները քննարկված և վերլուծված են այս մրցակցային առավելությունների հետ ընդհանուր համատեքստում: Այդ մրցակցային առավելություններն են.

- Որակյալ «Արենի» տեսակի կարմիր գինի՝ չոր և կիսաչոր:
- Ձևավորված «Արենի» ապրանքանիշ:
- Աշխարհի ամենահին կոշիկը և գինու արտադրամասը (5000-6000 տարեկան):
- Արփա գետի ձուկը (կողակ, բեղլու) և եփելու ավանդական եղանակը:
- Եզակի բնությունը:
- Նորավանքի վանական համալիրը:
- Մագիլի քարանձավը, որը Հայաստանում ամենամեծն է (քարտեզագրված տարածքը 1,7 կմ խորություն ունի):
- Մոմիկի ծննդավայր Ուլգյուր (Ուլգյուրտ) հին բնակավայրը,
- Այլ բազմաթիվ պատմամշակութային հուշարձաններ,
- Ղավուրման և դրա պատրաստման արարողությունը,
- Այգեգործության և գինեգործության ավանդական տեխնոլոգիաներ և գիտելիքներ,
- Հյուրասեր ժողովուրդ,
- Հարյուրամյակների բարեկամական և համագործակցական կապեր երեք գյուղերի բնակիչների միջև:



Տնտեսության ճյուղերի վերլուծություն

Համայնքների տնտեսության հիմնական ճյուղերը վերլուծելիս հաշվի է առնվել, թե որտե՛ղ է կենտրոնացած համայնքի աշխատող բնակչության մեծ մասը, և որտե՛ղ է ստեղծվում ամենամեծ եկամուտը: Գնահատվել են այս ճյուղերի զարգացման վրա ազդեցություն ունեցող գործոնները, արժեքային



շղթաները, օժանդակող ճյուղերի հասանելիությունը, անհրաժեշտ ենթակառուցվածքների հասանելիությունն ու ճյուղում առկա պահանջարկի որակը: Ուշադրություն է դարձվել ճյուղերի շահութաբերության վրա՝ համեմատած այլ ճյուղերի և համայնքների (որոշ դեպքերում տարածաշրջանների և հանրապետության միջին) ցուցանիշների հետ:



Փորձագետները և տեղական թիմը համատեղ առանձնացրել են համայնքների տնտեսական զարգացման գերակա ճյուղերը, որոնք հիմնված են տեղական մրցակցային առավելությունների վրա.





- ⇒ **Խաղողագործություն և գինեգործություն**
- ⇒ **Պտղաբուծություն և պտուղների շարունակական վերամշակում**
- ⇒ **Պատմամշակութային, էքստրիմ և գինու տուրիզմ**
- ⇒ **Անասնապահություն**

Խաղողագործություն և զինեգործություն

Խաղողագործությունն ու զինեգործության ավանդույթը այս համայնքներում բավականին հին է և ունի մի քանի հազար տարվա պատմություն: Մի քանի տարի առաջ Արենի համայնքում գտնվող քարանձավների պեղումների ժամանակ հնէաբանները հայտնաբերել են մոտ 5000-5500 տարեկան զինու պատրաստման արտադրամաս, որը ներկայումս ճանաչվում է որպես աշխարհի հնագույն զինու արտադրամասը: Այստեղ հայտնաբերված խաղողի կորիզների միջոցով հնարավոր է եղել պարզել, որ մշակվել է նույն՝ «Արենի» տեսակի խաղողը, որը ներկայումս մշակվում է այս տարածաշրջանում:

Խաղողի այգիների բաշխվածությունը ըստ համայնքների և ըստ պատկանելիության տրված է ստորև հեկտարներով.

Խաղողի այգիներ/ 684 հա



Գինու գործարաններ և խոշոր արտադրողներ

Սեփական այգիները մշակում են ժամանակակից տեխնիկայով: Անհրաժեշտ պարարտանյութերը, թունաքիմիկատներն ու դեղամիջոցները գնում են Էրևանյան մասնագիտացված խանութներից և տեղական մասանգիտացված մատակարարներից:

Բերքատվությունը տատանվում է 8 -10 տոննա/ հեկտար սահմաններում: Խաղողի որակը ուղղակիորեն կապված է բերքատվության քանակի հետ: Ինչքան բարձր է բերքատվությունը, այնքան քիչ է շաքարի պարունակությունը խաղողի մեջ: Բոլոր արտադրողները «էտում են» (կտրում են ավելորդ ճյուղերը) և հետևում, որպեսզի ստացվող բերքը չանցնի 12 տ-ն և միննույն ժամանակ բարձր լինի բերքի որակը:

Այս ընկերությունները միտված են սեփական խաղողի այգիների ավելացմանը: Առաջիկա 5 տարում ակնկալվում է, որ գործարաններին պատկանող բերքատու խաղողի այգիների քանակը կաճի 20%-ով:

Խաղողագործությամբ զբաղվող համայնքի բնակիչներ

427 հեկտար խաղողի այգի պատկանում է համայնքի բնակչությանը, ովքեր ունեն 1200 քմ –ից մինչև 1 հեկտար այգիներ: Այս այգիներում միջին բերքատվությունը կազմում է 12 տոննա մեկ հեկտարից:

Խաղողագործության մեջ 1 հեկտարի հաշվարկով շահութաբերությունը ներկայացված է ստորև.

1 հա-ից ստացվող միջին բերք	12 տ
Վաճառքի միջին գին	230 դրամ
Եկամուտ	2 760 000
Արտադրական միջին ծախսեր	1 130 000
Շահույթ	1 630 000
1 կգ ինքնարժեք	94 դրամ

Խաղողի մշակության համար բոլոր երեք համայնքներում պարարտանյութերը ձեռք են բերում հիմնականում գյուղապետարանների միջոցով, իսկ լրացուցիչ անհրաժեշտության դեպքում նաև ձեռք են բերում շուկաներից:

Բուժանյութերի ձեռքբերումը կատարվում է հիմնականում երկու տարբերակով: Արենի և Ռինդ համայնքներում բուժանյութերը հիմնականում ձեռք են բերվում Եղեգնաձոր, Երևան քաղաքների, հարակից համայնքների թունաքիմիկատների խանութներից՝ կանխիկով, իսկ Աղավնաձոր համայնքում տարածված է նաև գինու գործարանների հետ նախորոք կնքված պայմանագրերի հիման վրա բուժանյութերի տրամադրումը, որի դիմաց վճարումը կատարվում է խաղողի մթերման ժամանակ: Այս տարբերակից օգտվում են համայնքի՝ խաղաղագործությամբ զբաղվող տնտեսությունների մոտ կեսը:

Բոլոր համայնքներում մեծ է դժգոհությունը՝ կապված թունաքիմիկատների որակի և արդյունավետության, ինչպես նաև բուժանյութերի ճիշտ և ժամանակին օգտագործման հետևանքանագիտացված խորհրդատվության պակասի հետ: Սպասարկող գյուղտեխնիկայի մասով համայնքներն ունեն հետևյալ պատկերը.

Արենի	Աղավնաձոր	Ռինդ
4 վարող տրակտոր	5 վարող տրակտոր	6 վարող տրակտոր
2 սրակիչ	5 սրակիչ	2 սրակիչ

Անհրաժեշտության դեպքում մեկ համայնքին պատկանող գյուղ. տեխնիկան օգտագործվում է մյուս համայնքներում:

Մթերում

“Արենի” տեսակի խաղողի մթերման գինը ամենաբարձրն է Հայաստանում և 2012թ. կազմել է 220-230 դրամ: Ամենախոշոր մթերողներն են “Արմենիա Վայն”, “Գետնատուն”, “Արփա Ալկո”, “Արենի” ՓԲԸ և “Վեդի Ալկո” ընկերությունները:

Մթերման ծավալները տատանվում են տարեցտարի, որոնց վրա ազդում է այդ տարվա բերքատվության քանակը, եղանակային պայմանները, արտահանման ծավալները և այլն:

Բնակչության մոտ մթերման հետ կապված հիմնական դժգոհությունները կապված են մթերման դիմաց վճարվող գումարների ուշացման հետ, ինչը մթերող ընկերությունները հիմնավորում են ներքին շուկայում վաճառված գինու դիմաց գումարների ստացման ուշացմամբ, որը թույլ չի տալիս ժամանակին վճարել գյուղացուն՝ մթերված խաղողի դիմաց:

Նաև առկա է դժգոհություն մթերվող կազմակերպությունների կողմից խաղողի որակի որոշման մասով: Բնակիչները բողոքում են, որ մթերող ընկերությունները ավելի քիչ են գնահատում շաքարի պարունակությունը, քան իրականում կա:

Չնայած, որ մթերող ընկերությունները մեծացնում են սեփական խաղողի այգիների ծավալները, 2013 –ից սկսած ակնկալվում է մթերման քանակի և գնի բարձրացում, ինչը բացատրվում է արտահանվող գինու քանակի մեծացմամբ և ռուսական շուկայում ներկրվող գինու որակի ստանդարտների խստացմամբ՝ 2013 թ-ից սկսած արգելվում է կոնցետրատներով (բնական խաղողի փոխարինիչ) արտադրված կոնյակի և գինու ներմուծումը ՌԴ:

Գինեգործություն

Գինու և գինեկոթի ստացում

Արենի համայնքում միջին և մանր տնտեսությունները խաղողի բերքի մոտ կեսը հանձնում են մթերող կազմակերպություններին, իսկ մյուս կեսը տնային պայմաններում վերածում են գինու:

Աղավնաձոր և Ռինդ համայնքներում տնայնագործական գինու է վերածվում բերքի մոտ 10 տոկոսը, իսկ մնացածը հանձնվում է մթերող կազմակերպություններին:

Արենի համայնքում վերամշակման բարձր տոկոսը պայմանավորված է գյուղի աշխարհագրական դիրքով. տեղակայված լինելով Երևան – Մեղրի ավտոմայրուղու վրա՝ այստեղ զարգացել է ճանապարհային ոչ շալցված գինու վաճառքը, ինչը ուղղակիորեն օժանդակում է գինու արտադրությանը և վաճառքին:

Տարայավորում



Գործարաններում գինին շշալցվում է հիմնականում 0.75լ տարողությամբ շշերով և շուկա է մտնում այդ տեսքով:

Տնայնագործական գինին տարայավորվում է արդեն օգտագործված պլաստմասե շշերի միջոցով՝ 1-20 և տարողությամբ:


Վաճառք

Գործարանային արտադրության գինու մոտ 27 տոկոսը հիմնականում չշշալցված վաճառվում է ՀՀ տարածքում, 48 % - ը շշալցվում և վաճառվում է ՀՀ տարածքում, իսկ մնացած մասը հիմնականում արտահանվում է:

Արենի համայնքում արտադրված տնայնագործական գինին մեծամասամբ վաճառվում է հենց տեղում՝ Երևան – Մեղրի մայրուղու Արենու հատվածի երկայնքով տեղակայված բազմաթիվ մանր վաճառակետերի միջոցով, իսկ մոտ 20 տոկոսը տեղափոխվում և վաճառվում է Երևան քաղաքում:

Աղավնաձոր և Ռինդ համայնքներում արտադրված տնայնագործական գինու մոտ 20 տոկոսը վաճառվում է տեղում (հիմնական գնորդները Արենու գինի վաճառողներն են), իսկ մնացածը հիմնականում վաճառվում է Երևան քաղաք տեղափոխելու միջոցով: Փոքր ծավալներով կատարվում է նաև գինու ապրանքափոխանակություն այլ մարզերում արտադրվող գյուղատնտեսական ապրանքների հետ:

Ստորև ներկայացված է գործարանային և տնական պայմաններում արտադրված գինու վաճառքի բաշխվածությունը ըստ շուկաների (հազար լիտրով):



Խաղողագործության – Գինեգործության արժեշտային գնահատում և բարելավման նախաձեռնություններ

Մատակարարում

Ով / Ինչ	Ուժեղ կողմեր	Բարելավման ուղղություններ	Համակարգային հնարավորություններ	Ռիսկեր	Բարելավման նախաձեռնություններ
Տնկիներ Թունաքիմիկատ, Պարարտանյութ Դեղանյութ Մարքավորումներ Ջրամատակարարում Գյուղ. տեխնիկա Խաղողի ճզմման ճառայություններ Շիշ, խցան և պիտակներ	Որակյալ մատակարարումների հասանելիություն	Թունաքիմիկատների, պարարտանյութերի և դեղանյութերի օգտագործման խորհրդատվություն չի տրվում: Օգտագործվում է հիմնականում հին գյուղ. տեխնիկա: Ռոռզման ցանցերը մաշված են: Բնակիչները գարնանը չեն կարողանում վճարել որակյալ մատակարարումների համար:	Արփա գետը ջրի անսահման պաշար է:		Նոր գյուղատեխնիկայի ձեռք բերման աջակցություն: Ռոռզման ջրագծերի թարմացում:

Խաղողագործություն

Ով / Ինչ	Ուժեղ կողմեր	Բարելավման ուղղություններ	Համակարգային հնարավորություններ	Ռիսկեր	Բարելավման նախաձեռնություններ
Գինեգործական գործարաններ “Արմենիա Վայն”, “Գետնատուն”, “Արփա Ալկո”, “Արենի”, “Վեդի Ալկո”, “Զորահ Վայն” Խաղողի 4 խոշոր արտադրողներ	8 – 50 հա սեփական այգիներ: Սեփական որակյալ գյուղատեխնիկայի առկայություն: Որակյալ խաղողագործական մասնագետներ: Ֆինանսական միջոցների առկայություն:	Եղանակային պայմաններից (կարկտահարություն և ցրտահարություն) պաշտպանության ցածր մակարդակ:		Բնակլիմայական պայմաններից կախվածություն	Երկխոսություն, փորձի փոխանակում փոքրերի հետ, տեխնիկական և տեխնոլոգիական համատեղ լուծումներ
Համայնքների բնակիչներ/ խաղողագործներ Մոտ 650 տնտեսություններ	1000 – 1200 քմ տարածք: Խաղողի մշակման ավանդական գիտելիքներ: Համագործակցություն մթերող ընկերությունների հետ:	Նոր տեսակի դեղամիջոցների, քիմիկատների օգտագործման վերաբերյալ գիտելիքի պակաս: Որակյալ մատակարարումներից օգտվելու գումարի պակաս: Ավելի շատ քանակությամբ բերք ստանալու ցանկությունը բերում է խաղողի որակի նվազմանը: «Միլիտրա» պարարտանյութի մշտական օգտագործում:	Համագործակցության մթնոլորտ, ինչը հնարավոր է դարձնում նույն մատակարարից միասնական գնում կատարելը: Խաղողի պահանջարկի կտրուկ աճ:	Բնակլիմայական պայմաններից կախվածություն: Մթերողները մեծացնում են սեփական այգիները:	Հակակարկտակայանն րի տեղադրում: Խաղողի որակի ստուգման մինի- սարքերի ձեռքբերման աջակցություն: Գարնանը կարճաժամկետ վարկերի տրամադրում՝ ընդունելի պայմաններով:

Գինեգործություն

Ով / Ինչ	Ուժեղ կողմեր	Բարելավման ուղղություններ	Համակարգային հնարավորություններ	Ռիսկեր	Բարելավման նախաձեռնություններ
Գինեգործական գործարաններ “Արմենիա Վայն”, “Գետնատուն”, “Արփա Ալկո”, “Արենի”, “Վեդի Ալկո”, “Զորահ Վայն”	Արդի սարքավորումներ: Որակյալ գինու ստացման տեխնոլոգիաներ: ISO սերտիֆիկացված ընկերության առկայություն: 2565 տ Արենի տեսակի գինու արտադրություն:	Գինու ստացման մեջ մասամբ օգտագործվում են կոնցենտրատներ, սպիրտ:	Լիցենզավորման «պարզ» ընթացակարգ, 25 000 դրամ պետական մուծում:	Որակյալ գինու մշակույթի բացակայություն:	Հաղորդաշար նվիրված որակյալ գինու արտադրությանը, համին, համտեսին: Արենի գինու բրենդի առաջ մղում տեղական և արտերկրյա շուկաներում:
Համայնքների բնակիչներ/ խաղողագործներ	885 տ գինու ստացում: Որակյալ գինու ստացման ավանդական տեխնոլոգիաներ, մասնագետներ:	Գինու ստացման համար օգտագործվում են հնամաշ սարքավորումներ: Գինին հնեցնում են պլաստմասե տակառներում: Տնական պայմաններում արտադրվող գինին տարբերվում է համային և որակական հատկանիշներով:		Մարդիկ պատրաստ չեն գինեգործության մեջ մեծ ներդրում անելու:	Գինեգործության մինի-արտադրամասերի հիմնման աջակցություն: Գինու որակի ստուգման լաբորատորիայի հիմնում:


Վաճառք

Ուվ / Ինչ	Ուժեղ կողմեր	Բարելավման ուղղություններ	Համակարգային հնարավորություններ	Ռիսկեր	Բարելավման նախաձեռնություններ
Գինեգործական գործարաններ	Արտադրված գինու 80 տոկոսը շշալցվում է: Արտադրված գինու 25 % - ը արտահանվում է:	Արտադրված գինու 20% -ը վաճառվում է չշշալցված:	Միջազգային շուկաներում դեպի գինու բնօրրանները հետաքրքրության աճ:	Միջազգային շուկայում դիրքերի թուլացման վտանգ, «Հայկական գինի» բրենդը կայացած չէ օտարերկրյա շուկաներում:	
Համայնքների բնակիչներ/ խաղողագործ - գինեգործներ	Բնակիչների մեծ մասը ունեն իրենց հիմնական հաճախորդները, կայուն պահանջարկ:	Գինին վաճառվում է պլաստմասե շշերով:	Վերջին հայտնագործությունները մեծացրել են հետաքրքրությունը Արենիի տարածաշրջանի նկատմամբ՝ ստեղծելով տուրիզմի զարգացման հնարավորություն:	Չշշալցված գինու վաճառքը ՀՀ -ում արգելված է:	Շշալցման և պիտակավորման աջակցություն: Դասընթացներ լիցենզավորման, սկզբիզավորման կարգի վերաբերյալ:
Արենի համայնքին հարող ճանապարհի վրա և շուկաներում չշշալցված գինի վաճառողներ	Գինին գնում են թե գործարաններից և թե տնային պայմաններում արտադրողներից:	Վաճառվող գինին հիմնականում չունի բարձր որակ, կարող է պարունակել ջուր, սպիրտ, կոնցենտրատներ:		Հյուսիս – Հարավ ավտոճանապարհի կառուցումից հետո հաճախորդների նվազում, մարդիկ հակված չեն վաճառվող գինու որակի բարձրացմանը:	Գինու թանգարան և ճանապարհային կայաններ (road stations):

Աջակից կառույցներ

Ուլ / Ինչ	Ուժեղ կողմեր	Բարելավման ուղղություններ	Համակարգային հնարավորություններ	Ռիսկեր	Բարելավման նախաձեռնություններ
<p>ՀՀ ՓՄՁ ԶԱԿ GIZ CARD «Արենի Փառատոն» հիմնադրամ «Վայոց ձորի տուրիզմի կենտրոն» ՀՀ Վայոց Ձորի մարզի ԱԱՊ</p>	<p>Ֆինանսական ռեսուրսներ Օժանդակության պատրաստակամություն Համագործակցություն</p>	<p>Գյուղատնտեսության ուղղակի աջակցության գործիքների բացակայություն, անհասանելիություն:</p>			<p>Համագործակցություն՝ նախաձեռնությունների իրականացման համար: Լոբբինգ, ծրագրերի և նախաձեռնությունների ներկայացում կառավարությանը:</p>
<p>ՀՀ կառավարություն</p>	<p>Գինեգործությունը ներառված է «Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ» գերակա ոլորտների շարքում: GIZ և Էկոնոմիկայի նախարարության կողմից համատեղ մշակվել է Գինեգործության զարգացման ռազմավարությունը: Պետական հովանավորչություն Արենի Գինու Փառատոնին</p>	<p>Գինեգործության զարգացման պլաններում և խնդիրներում գրեթե ուշադրություն չի դարձվում տնային պայմաններում գինեգործությանը: ՀՀ –ում արտադրության կազմակերպման նպատակով ներմուծվող սարքավորումների ԱԱՀ-ից հարկման տարկետման իրավունքից զինու արտադրամասերը չեն կարողանում օգտվել, քանի որ ներմուծված սարքավորումների արժեքը չի գերազանցում 300 մլն. դրամը:</p>	<p>Թե՛ միջազգային և տեղական աջակից կառույցները, և թե՛ կառավարությունը միտված են համագործակցության, ինչը ստեղծում է համակարգային համագործակցության և սիներգիայի ավելացման հնարավորություն:</p>		<p>Գինեգործության զարգացման ռազմավարության հետևողական իրականացում</p>

Նախաձեռնություններ



Այգեգործություն և պտուղների շարունակական վերամշակում

Այգեգործությունը երեք համայնքերի համար տնտեսության հենակետային ճյուղերից է: Խաղողագործություն – գինեգործություն արժեշտից հետո հենց այգեգործության մեջ է ստեղծվում բնակչության մեծ մասի եկամուտը:

Հիմնական մշակվող այգեգործական կուլտուրաներն են՝ դեղձը, ծիրանը, խնձորը, բալը, կեռասը, սալորը, ընկույզը և նուշը:

Երեք համայնքներում միասին կա

- 135 հա դեղձի այգի
- 60 հա ծիրանի այգի
- 58 հա խնձորի, բալի, կեռասի, սալորի, ընկույզի և նուշի այգիներ:

Դեղձի մշակման մեջ առաջատարը Ռինդ համայնքն է թե՛ այգիների քանակով, թե՛ մշակության ձևավորված ավանդույթով, քանի որ դեղձը համայնքում սկսել են մշակել 1960 ական թվականներից, իսկ Արենի և Աղավնաձոր համայնքներում այն սկսվել է մշակվել 1980-ականների վերջերից:

Դեղձի միջին բերքատվությունը տարածաշրջանում հեկտարից կազմում է 20 տոննա, իսկ առավելագույնը հասնում է 40-45 տոննայի:

Ծիրանի մշակման առաջատարը հանդիսանում է Աղավնաձոր համայնքը, որտեղ ծիրանի այգիները համեմատաբար ավելի շատ են, իսկ բերքի հասունացման շրջանը, համեմատած մյուսների հետ, 10-20 օր ուշ է սկսում, ինչի շնորհիվ բերքն ունենում է համեմատաբար բարձր գին: Բարենպաստ տարիներին ծիրանի բերքատվությունը տարածաշրջանում կազմում է 40 տոննա 1 հա-ի հաշվարկով, իսկ միջին բերքատվությունը 10-12 տոննա է:

Ռինդ համայնքը առանձնանում է նաև բալի և կեռասի աճեցման բավականին լուրջ ծավալներով (մոտ 35 հա):


Մնացած կուլտուրաները գրեթե հավասարաչափ են բաշխված համայնքների միջև:

Թե՛ բերքատվության, թե՛ կատարված աշխատանքների առումով այգեգործությունը չի տարբերվում ՀՀ այլ համայնքերից, որտեղ աճեցվում են միևնույն տեսակի մրգերը:

Համայնքի այգեգործների մոտ բավականին բարձր է համագործակցության մակարդակը: Այն արտահայտվում է հիմնականում փորձի փոխանակմամբ, դեղանյութերի և պարարտանյութերի միասնական ձեռքբերմամբ և այլն:

Իրենց արտադրանքի մասին համայնքները հիմնականում սպառողներին տեղեկացնում են Արենի գյուղում կազմակերպվող գինու փառատոնի շրջանակներում: Արտադրանքի գովազդ որպես այդպիսին չկա: Ստացված բերքի մոտ 30%-ը փոխանակվում է այլ մարզերի արտադրանքի հետ:

Այգեգործության ճյուղի վրա ազդող գործոններ



Նախաձեռնություններ այգեգործության և պտուղների շարունակական վերամշակման արժեշղթայում

Այս ոլորտի զարգացմանն ուղղված նախաձեռնությունները բաժանված են երկու ենթախմբի՝

Բերքի քանակական և որակական աճ

- Հակակարկտակայաններ
- Պտղատու այգիների հիվանդությունների կանխատեսում, խորհրդատվություն
- Կուլտիվացիոն մեխանիզմներ, գործիքներ
- Որակյալ պարարտանյութեր, թունաքիմիկատներ, դեղամիջոցներ

Այս նախաձեռնությունները համընկնում են խաղողագործության զարգացման մեջ առաջարկվող նախաձեռնություններին, որոնք ներկայացված են Խաղողագործություն բաժնում:

Պտուղների շարունակական վերամշակում

Եղանակային յուրահատուկ պայմանները հնարավորություն են տալիս այս շրջանում ստանալու առանձնահատուկ համ ունեցող մրգեր. խոնավության ցածր մակարդակը և շոգ ամառը մրգին են փոխանցում քաղցրություն, յուրահատուկ համ:

Նախաձեռնություն 1. Չրանցների հիմնում

Քաղցրություն և ջրի քիչ քանակություն ունեցող միրգը իդեալական հումք է չրագործության համար: Համեմատության համար նշենք 1 կգ դեղձի չիր ստանալու համար անհրաժեշտ հումքի քանակը Նոյեմբերյանի, Արարատյան դաշտի և այս շրջանների համար.

	Նոյեմբերյան	Արարատյան դաշտ	Աղավնաձոր, Ռինդ և Արենի
1 կգ դեղձի չիր	9 -12կգ	8 -9 կգ	7 -8 կգ

Միևնույն ժամանակ, ամռանը բարձր ջերմաստիճանը և օդի մեջ խոնավության ցածր մակարդակը իդեալական պայմաններ են ստեղծում արևային չորանոցների համար:



Նախաձեռնություն 2. Սառնարանների հիմնում

Ստացվող բերքի մեծ մասը համընկնում է այլ մարզերում նույն բերքի ստացման ամենաբարձր բերքատվություն ունեցող ժամանակահատվածին, ինչի արդյունքում շուկայում վաճառվում է հնարավոր ամենացածր գնով: Սառնարանների հիմնումը համայնքներում թույլ կտա բերքի որակյալ մասը պահպանել և վաճառել ավելի ուշ՝ աշնան և ձմռան ընթացքում:

Զբոսաշրջությունը Արենի, Աղավնաձոր և Ռինդ համայնքներում

Տուրիզմը հիմնականում կենտրոնացած է Արենի համայնքում և նրա շրջակայքում: Տուրիզմի զարգացմանն է նպաստել Երևան – Մեղրի միջպետական ճանապարհին մոտ լինելը, և Նորավանք հանրահայտ վանքային համալիրը, որը ընդգրկված է այս ճանապարհով անցնող գրեթե բոլոր տուրիստական երթուղիներում:

Պետք է նշել, որ բավականին քիչ են տուրիստները, ովքեր տուրիստական երթուղիներից դուրս՝ նպատակային այցելում են այս վայրեր:

Սակավաթիվ զբոսաշրջիկներ այցելում են նաև Աղավնաձոր համայնք, որի շրջակայքում է գտնվում Ուլգյուր (Ուլգյուրտ) հին գյուղատեղին, որտեղ, ըստ ավանդության, ծնվել է Մովսիս ճարտարապետը:

Հիմնականում դրսից եկող զբոսաշրջիկները թռչակառուներ են, քանի որ այստեղ հիմնականում տուրիզմը պասիվ է և հիմնված է պատմամշակութային հուշարձանների առկայության վրա:

Վերջին տարիներին դրական միտում է նկատվում արտասահմանցի երիտասարդ զբոսաշրջիկների թվի ավելացման մեջ, ովքեր գալիս են հիմնականում հեծանիվներով, 2-3 հոգով:

Բավական մեծ թիվ են կազմում ներքին տուրիստները, ովքեր վաղ գարնանից մինչև ուշ աշուն այցելում են այստեղ՝ հիմնականում հանգստյան օրերին:


Համայնքում, սակայն, տուրիստական այլ գրավչություններ և ենթակառուցվածքներ որպես այդպիսին զարգացած չեն՝ չկան տեղական տուր- օպերատորներ, հարմարավետ հյուրատներ, զվարճանքի վայրեր:

Այս ոլորտում գործում են բավական ակտիվ աջակից կառույցներ (Վայոց Ձորի ԱԱՊ, Տուրիզմի տարածաշրջանային կենտրոն, Վայոց Ձորի տուրիզմի զարգացման կենտրոն, այլ աջակից կառույցներ), որոնց ռազմավարական պլաններում մտնում է


1. Արենի Գինու փառատոնի 5 -7- օրյա տևողությունը,
2. Բերքի տոնի անջատումը և ներկայացումը Ռինդ –ում,
3. Ագրո և Գինու տուրիզմի կայացումը այդ համայնքներում:

Ստորև ներկայացված են այս ոլորտում բացահայտված հնարավորությունները և բարելավման պոտենցիալ ունեցող ուղղությունները:

Զբոսաշրջության արժեզրայի գնահատում



Ոլորտում աշխատող կազմակերպություններ



Աջակից կառույցներ

Վալոց Ձորի մարզպետարան

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ

Տուրիզմի տարածաշրջանային կենտրոն

«Արենի Փառատոն» հիմնադրամ

Վալոց Ձորի տուրիզմի զարգացման կենտրոն

Վալոց Ձորի ԱԱՊ

Գիշերակաց

Հնարավորություններ

1 հյուրանոց, որն ունի սպասարկման համեմատաբար բարձր մակարդակ, միջին գներ

Մնունդ

Մայրուղու ամբողջ երկայնքով տեղակայված են հասարակական սննդի օբյեկտներ, որակյալ սննդի կետեր են գործում նաև Նորավանք տանող ճանապարհի վրա, կառուցվում է նաև Արենի գյուղում:

Գնումներ

Հնարավոր է գնել տեղական որակյալ Արենի տեսակի գինի

Ժամանց

Անվտանգություն և առողջապահություն

Հասանելի է առաջին օգնությունը

Արշավներ

Կա տեղական կազմակերպություն, որը կազմակերպում է արշավներ, ունի տուրիստների բավարար քանակությամբ հոսք:

Բարելավման ուղղություններ

Հարմարավետ հյուրատներ չկան: Տեղի բնակիչները պատրաստ են իրենց տան ազատ սենյակները վարձով տալու տուրիստներին (մոտ 10 տուն- հավելվածում՝ ցուցակը): Այս տներում բավականին ցածր են կենցաղային պայմանները:

Հասարակական սննդի շատ փոքր հատվածը ունի մենյու և ավանդական այնպիսի ճաշատեսակներ, ինչպիսիք են դավուրման, Արփա գետի ավանդական եղանակով եփած ձուկը և այլն:

Չկան մասնագիտացված և բրենդային խանութներ, հուշանվերների վաճառք: Գինին վաճառվում է պլաստմասե շշերի մեջ:

Համայնքին անհրաժեշտ են երեկոյան ժամանցային վայրեր, մարզադահլիճներ և այլն:

Չկան տուր-արտադրանքի գովազդային և տեղեկատվական առաջնորդման գործիքներ: Ճանապարհները հիմնականում գտնվում են վատ վիճակում: Բարեկարգ է միայն Նորավանք տանող ճանապարհը, սակայն գյուղերի շրջակայքում կան ոչ պակաս հետաքրքիր պատմամշակութային հուշարձաններ /ամրոցներ, եկեղեցիներ, քարայրներ/, որտեղ հասնելը լուրջ խնդիր է՝ անբարեկարգ ճանապարհների պատճառով: Կան գրավիչ պայմաններ էքստրիմ և վրանային տուրիզմի զարգացման համար:

Նախաձեռնություններ տուրիզմի զարգացման ոլորտում

Նախաձեռնություն	Զբոսաշրջության զարգացում Արենի, Ռինդ, Աղավնաձոր համայնքներում
Նախաձեռնության համակարգող	Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ
Նախաձեռնության աջակից կառույցներ	Վայոց ձորի ԱԱՊ, Տուրիզմի տարածաշրջանային կենտրոն, Վայոց Ձորի տուրիզմի զարգացման կենտրոն, այլ աջակից կառույցներ
Նպատակ	Շրջանի կայացումը որպես պատմամշակութային , էկո-տուրիզմի և գինու տուրիզմի կենտրոն
Խնդիրներ	
	Տուրիզմի ոլորտի զարգացման ուղեկցում
	Գովազդային – տեղեկատվական գործունեություն
	Ծառայության ոլորտում սպասարկման որակի բարձրացում
	Հյուրատների քանակի աճ, ցանցի ստեղծում

Իրականացվելիք գործողությունները ըստ խնդիրների և պատասխանատուներ

Խնդիր I. Տուրիզմի ոլորտի զարգացման ուղեկցում

Գործողություն	Պատասխանատու
Երեք համայնքների համար տուրիզմի զարգացման ռազմավարության մշակում ¹	Աջակից կառույցներ
Տեղական տուր-օպերատորի հիմնում	Աջակից կառույցներ
Գիդերի, թարգմանիչների, հրահանգիչների վերապատրաստում	Տուր օպերատոր, Աջակից կառույցներ
Տուրերի մշակում, գովազդում	Տուր օպերատոր (ներ)

¹ Տուրիզմի զարգացման ռազմավարության մեջ ներառված կլինեն նաև հասանելի արդյունքներ՝ տուրիստների քանակ, սպասարկման ոլորտում որակի չափորոշիչներ, աշխատատեղերի քանակ և այլն:

Խնդիր II. Գովազդային – տեղեկատվական գործունեություն

Գործողություն	Պատասխանատու
Գովազդային - տեղեկատվական բուկլետների տպագրություն	Տուր օպերատոր, ՓՄՁ ՋԱԿ, Աջակից կառույցներ
Երեք համայնքներին վերաբերող թեմատիկ բուկլետների տպագրություն	ՓՄՁ ՋԱԿ, Տուր օպերատոր, Աջակից կառույցներ
Տուրիստական միջոցառումների, ցուցահանդեսների մասնակցություն	ՓՄՁ ՋԱԿ, ՏԻՄ, Աջակից կառույցներ
Ինտերնետ կայքի պատրաստում, եղած կայքերում երեք համայնքների տուրիստական գրավչության առանձին ներկայացում	Տուր օպերատոր, ՏԻՄ, Աջակից կառույցներ

Խնդիր III . Ծառայության ոլորտում սպասարկման որակի բարձրացում

Գործողություն	Պատասխանատու
Ավանդական ճաշատեսակների մատուցում	Գործարարներ
Երկու լեզվով մենյուի օգտագործում	Գործարարներ
Էկո-տուրիզմի տարբեր բնագավառներում անհրաժեշտ նյութական ռեսուրսային միջոցների բարելավում, թարմացում	Գործարարներ

Խնդիր IV. Հյուրատների քանակի աճ, ցանցի ստեղծում

Գործողություն	Պատասխանատու
Հյուրատների զարգացման միասնական ռազմավարության և որակի ստանդարտների կազմում	ՓՄՁ ՋԱԿ, այլ աջակից կառույցներ
Բիզնես պլանավորման դասընթաց՝ հյուրատան ոլորտում ներդրում կատարող գործարարների հետ	ՓՄՁ ՋԱԿ, այլ աջակից կառույցներ
Ֆինանսական աջակցություն	ՓՄՁ ՋԱԿ

Անասնապահություն

Բոլոր երեք համայնքներում էլ նկատվում է անասնապահություն աճ: Կովերի միջին կաթնատվությունն այստեղ 2500կգ է, ինչը հանրապետությունում մրցունակ ցուցանիշ է: Աղավնաձորում կան նաև նոր սորտեր ստանալու փորձեր, որոնց կաթնատվությունը 3000կգ-ի է հասնում: Հեռագնա արոտները կազմակերպում են Ջերմուկի և Մարտունու արոտավայրերում:

Կաթի վերամշակումից հիմնականում պանիր են ստանում՝ տնային պայմաններում: Անասնապահների հետ հանդիպումները ցույց են տվել, որ նրանք միտված են մեծացնել իրենց անասնագլխաքանակը, որից հետո էլ աշխատել կաթնամթերքի վերամշակման արտադրություն կազմակերպելու ուղղությամբ:

Ֆերմերներին անասնապահության զարգացման և ընդլայնման համար պակասում է գյուղատնտեսական ցածր տոկոսադրույքով վարկերի հասանելիությունը:



Հատուկ շնորհակալություն ենք հայտնում Արենի, Ռինդ և Աղավնաձոր համայնքերի գյուղապետարաններին և տեղական թիմին՝ ծրագրի իրականացմանը աջակցություն ցուցաբերելու համար:

Ծրագրի փորձագիտական խումբ

Արտակ Դադոյան
Արտյոմ Գրիգորյան
Գառնիկ Մանուկյան
Սևակ Դադոյան